ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

15 սեպտեմբերի 2022 թվական թիվ 148-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐԶԻԿՆԵՐԻՆ ԵՎ ՄԱՐԶԻՉՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 11-րդ մասի, 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու 2022 թվականի ապրիլի 26-ի թիվ 61-Ն որոշման հավելվածի 17-րդ կետի դրույթներով, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Ազատան, Կառնուտ գյուղերի վարչական ղեկավարների և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի «Ախուրյանի համալիր մարզադպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի գրությունները՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանին որոշում է՝

1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի 2022 թվականի բյուջեի 10 բաժնի 07 խմբի 01 դասի սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) ծրագրի 4727 «Կրթական, մշակութային և սպորտային նպաստներ բյուջեից» հոդվածով հատկացված գումարներից դրամական աջակցություն տրամադրել՝

1) 2022 թվականի հուլիսի 10-ին Հայաստանի Հանրապետության մայրաքաղաք Երևանում կայացած բռնցքամարտի պատանիների Հայաստանի Հանրապետության առաջնությունում 66 կիլոգրամ քաշային կարգում 2-րդ տեղը զբաղեցրած, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Ազատան գյուղի բնակիչ Արշակ Վահրամի Բաբլումյանին՝ 50000/հիսուն հազար/ դրամ,

2) 2022 թվականի հուլիսի 10-ին Հայաստանի Հանրապետության մայրաքաղաք Երևանում կայացած բռնցքամարտի պատանիների Հայաստանի Հանրապետության առաջնությունում 60 կիլոգրամ քաշային կարգում 3-րդ տեղը զբաղեցրած, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Ազատան գյուղի բնակիչ Տիտալ Սիմոնի Մամոյանին՝ 40000/քառասուն հազար/ դրամ,

3) 2022 թվականի մարտի 22-25-ը Հայաստանի Հանրապետության մայրաքաղաք Երևանում կայացած ազատ ոճի ըմբշամարտի պատանիների Հայաստանի Հանրապետության առաջնությունում 92 կիլոգրամ քաշային կարգում 1-ին տեղը զբաղեցրած, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Ազատան գյուղի բնակիչ Հենրիկ Լյովայի Հայկյանին՝ 60000 /վաթսուն հազար/ դրամ,

4) 2022 թվականի մարտի 22-25-ը Հայաստանի Հանրապետության մայրաքաղաք Երևանում կայացած ազատ ոճի ըմբշամարտի պատանիների Հայաստանի Հանրապետության առաջնությունում 65 կիլոգրամ քաշային կարգում 2-րդ տեղը զբաղեցրած, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Ազատան գյուղի բնակիչ Լյովա Հովհաննեսի Ավագյանին՝ 50000 /հիսուն հազար/ դրամ,

5) 2022 թվականի փետրվարի 6-ին Հայաստանի Հանրապետության մայրաքաղաք Երևանում կայացած բռնցքամարտի երիտասարդների Հայաստանի Հանրապետության առաջնությունում 63,5 կիլոգրամ քաշային կարգում 3-րդ տեղը զբաղեցրած, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Ազատան գյուղի բնակիչ Յուրա Վահրամի Բաբլումյանին՝ 60000/վաթսուն հազար/ դրամ,

6) 2022 թվականի հուլիսի 10-ին Հայաստանի Հանրապետության մայրաքաղաք Երևանում կայացած բռնցքամարտի պատանիների Հայաստանի Հանրապետության առաջնությունում 80+ կիլոգրամ քաշային կարգում 2-րդ տեղը զբաղեցրած, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Կառնուտ գյուղի բնակիչ Միսակ Գևորգի Տեփանյանին՝ 50000 /հիսուն հազար/ դրամ, մարզիչ Արտավազդ Գևորգայնին՝ 25000 /քսանհինգ հազար/ դրամ,

7) 2022 թվականի ապրիլի 6-8-ը Հայաստանի Հանրապետության մայրաքաղաք Երևանում կայացած հունահռոմեական ընբշամարտի երիտասարդների Հայաստանի Հանրապետության առաջնությունում 55 կիլոգրամ քաշային կարգում 3-րդ տեղը զբաղեցրած, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Ախուրյան գյուղի բնակիչ Մանվել Էդգարի Խաչատրյանին ՝ 60000/վաթսուն հազար/ դրամ,

8) 2022 թվականի ապրիլի 11-13-ը Հայաստանի Հանրապետության Արտաշատ քաղաքում կայացած ազատ ոճի ընբշամարտի երիտասարդների Հայաստանի Հանրապետության առաջնությունում 92 կիլոգրամ քաշային կարգում 2-րդ տեղը զբաղեցրած, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի գյուղի բնակիչ Արման Էդիկի Մահտեսյանին 80000/ութսուն հազար/ դրամ,

9)2022 թվականի փետրվարի 6-ին Հայաստանի Հանրապետության մայրաքաղաք Երևանում կայացած բռնցքամարտի երիտասարդների Հայաստանի Հանրապետության առաջնությունում 75 կիլոգրամ քաշային կարգում 3-րդ տեղը զբաղեցրած, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Ախուրյան գյուղի բնակիչ Սարգիս Մկրտիչի Համբարյանին՝ 60000/վաթսուն հազար/ դրամ, մարզիչ Արման Հովիկյանին՝ 30000 /երեսուն հազար/ դրամ,

2.2022 թվականի օգոստոսի 15-21-ը Բուլղարիայի Հանրապետության մայրաքաղաք Սոֆիայում կայացած երիտասարդների ազատ ոճի ըմբշամարտի աշխարհի առաջնությունում 79 կիլոգրամ քաշային կարգում 2-րդ տեղը զբաղեցրած, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Ազատան գյուղի բնակիչ Մուշեղ Միշայի Մկրտչյանին՝ 600 000 /վեց հարյուր հազար/ դրամ:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու անդամներ՝

Կողմ -14 Դեմ -0 Ձեռնպահ -0

Մ. ԱՌԱՔԵԼՅԱՆ

Հ. ԱՌԱՔԵԼՅԱՆ

Կ. ԱՐՇԱԿՅԱՆ

Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

Ս. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Ա. ԴՐՄԵՅԱՆ

Ա. ԻԳԻԹՅԱՆ

Ս. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Լ. ՂԱԶԱՐՅԱՆ

Ա. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆ

Ա. ՄԿՐՏՉՅԱՆ

Գ. ՄԿՐՏՉՅԱՆ

Ա. ՄՔՈՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ԻԳԻԹՅԱՆ**

15 սեպտեմբերի 2022 թվական
գյուղ Ախուրյան